ասէ, եթէ փականք Այրին 'ի ձեռս Յունաց է՝ ուրեմն
նոքա բացին զդուռն, և գիտութեամբ նոցին մտի յայրն,
և դատաւորն յեցեալ 'ի բանս հրովարտակին, պնդէր թէ
չէ օրէն մտանել ումեք անդ առանց հրամանի Յունաց։
Գրիգոր Պատրիարք կացոյց վկայս յայլազգեաց, թէ Ա-
թանաս ինքն եբաց զդուռն Այրին, և այլ բանիւք ջանայր
ազատիլ 'ի զրպարտութենէ Յունաց, այլ դատաւորն ոչ
կամեցաւ լսել բանից նորա, որով անկաւ Գրիգոր Պատ-
րիարք 'ի տուգանս, և տուեալ ինչս դատաւորին և մե-
ծամեծաց զերծաւ 'ի վտանգէն։ Ի ١٠ Շապան ամսոյ,
١٠٤٥ (1635)։ Իսկ ձեռագիր յիշատակարան մի ասէ, թէ
դատաւորն սպառնայր արկանել զնա 'ի գեհեն հնոցի, եւ
նորա տուժեալ 1000 դահեկանս, հազիւ զերծաւ 'ի բռ-
նութենէ Յունաց։

Յաւուրս յայսոսիկ սաստկանայր օր քան զօր վէճ եւ
խռովութիւն 'ի մէջ կրօնաւորաց երից ազգաց՝ 'ի տաճարին
Ս. Յարութեան, սակս լուցանելոյ զկանթեղս՝ աւել ածե-
լոյ եւ մաքրելոյ, իւրաքանչիւր ազգ զսեփհական տեղիս
իւր, և ջանային անցանել զսահմանն որոշեալ՝ և յափշտա-
կել զիրաւունս միմեանց։ Յայսպիսի դէպս բազում ան-
գամ հարստահարեալ լինէին Հայք, 'ի Յոյն և 'ի Լատին
կղերաց, և 'ի գրգռիլ բանից հարկանէին զիրեարս բրօք
և մահակօք. և այսպէս անվերջանալի էր վէճն։ Գրիգոր
Պատրիարք կամեցեալ դիւր առնել փոքր ինչ իւրոցն, ա-
ռաքեաց առ դատաւորն զԹարգմանն Տօնիկ, և խնդրեաց
'ի նմանէ 'ի գրի հարկանել զրովանդակ սեփհական տեղիս
Հայոց, զկանթեղս զաշտանակս և զսովորութիւնս, որք կա-
տարեն անդ, եւ նա արար այնպէս. ուր էին նաեւ Յոյն
և Լատին կղերք, և պատուիրեաց եւս չյանդգնիլ ումեք
ձեռն մխել յիրաւունս այլոց, և յարուցանել վէճս։ Ի ١ Րէ-
ալիւ ախըր, ١٠٤٦ (1636)։

Այլ մինչդեռ զբաղեալ էր Գրիգոր հանդարտել զվէճս Ս. Յա-
րութեան, յարեան ոմանք յազգէն Յունաց որք բնակէին 'ի
Բեթղեհէմ. և կաքէին ընդ Գրիգորի Պատրիարքի, որպէս
թէ յափշտակեալ իցէ զգերեզմանատուն նոցին և արարեալ
պարտէզ, թէպէտ նա առաջի արար նոցա զվաւերական
գրեանս վասն այնր տեղւոյ, և հաստատէր լինել սեփհա-